ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 16-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<բ>> պարբերության համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2022 թվականի գնումների պլանով նախատեսված 71631110 CPV կոդով <<սարքերի ստուգման ծառայություններ>> գնման առարկայի ձեռքբերման նպատակով գնումների պատասխանատու ստորաբաժանում սահմանել խումբ՝ ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը, Պարեկային ծառայությանը և Ճանապարհային ոստիկանությանը:
2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասու ծառայողներին (աշխատողներին):

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

<< 06 >> 06 2022թ.

ք.Երևան